ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. մայիսի 2-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրայելյան	Կոմիտեի անդամ

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **22.04.2023թ-ի «Անդրանիկ ՖԱ-05»-«Ակադեմիա 05» (18A-060) խաղին 1) «Անդրանիկ ՖԱ-05» թիմի ֆուտբոլիստ Արթուր Մարտիրոսյանի (32228) մրցակցին բռունցքներով և ոտքերով հարվածելը 2) «Ակադեմիա-05» թիմի ֆուտբոլիստ Հովհաննես Հակոբյանի (26516) մրցակցին բռունցքներով և ոտքերով հարվածելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Անդրանիկ ՖԱ-05» թիմի ֆուտբոլիստ Արթուր Մարտիրոսյանի (32228) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 3 խաղով և «Անդրանիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի՝ 7,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Ակադեմիա-05» թիմի ֆուտբոլիստ Հովհաննես Հակոբյանի (26516) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 3 խաղով և «Տեխնիկական կենտրոն/Ակադեմիա»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի՝ 7,000 ՀՀ դրամի չափով:

2. 25.04.2023թ-ի «Փյունիկ-1-13»«Ակադեմիա-2-13» (10Գ-031) խաղին «Ակադեմիա-2-13» թիմի ֆուտբոլիստների ծնողների կողմից խաղը սպասարկող անձնակազմի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելը, վերջիններիս հետ հաշվեհարդարի փորձ անելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ակադեմիա-2-13» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 23-րդ կետը՝ «Տեխնիկական կենտրոն/Ակադեմիա»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով:
Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 23-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 3,000 ՀՀ դրամի չափով:

3. 23.04.2023թ-ի «Արարատ-Արմենիա-աղջիկներ»«Հայասա» (ԿԲԽ-023) խաղի ուշացումով սկսվելը՝ «Հայասա» թիմի ուշանալու պատճառով

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Հայասա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 33-րդ կետը՝ «Հայասա ՖԱ» ՄՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

4. 23.04.2023թ-ի «Կարմիր Արծիվներ»- «Վեգա» (ՖՁԱԽ-021) խաղին «Կարմիր Արծիվներ» թիմի երկրպագուի կողմից մրցավարների հասցեին սպառնալիքներ հնչեցնելը, անհարգալից արարքներ թույ տալը, խաղի ընթացքին խանգարելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Կարմիր Արծիվներ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 48-րդ հոդվածի 12-րդ կետը՝

«Կարմիր Արծիվներ Ֆան Շարժումին»-ին տուգանել մինչև նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ 20,000 ՀՀ դրամի չափով։

5. **29.04.2023թ-ի «Կողբ Յունայթեդ-05»-«Վանաձոր-06» (18Բ-054) 1) խաղի 40 րոպե ուշացումով սկսվելը՝ բժիշկ չլինելու պատճառով, 2) խաղը 27-րդ րոպեին անավարտ թողնելը՝ բժշկի հեռանալու պատճառով**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Կողբ Յունայթեդ-05» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Կողբ ՄԱ ՀԿ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ 20,000 ՀՀ դրամի չափով։
2) Հաստատված համարել «Կողբ Յունայթեդ-05» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 20-րդ կետը՝ «Կողբ ՄԱ ՀԿ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի՝ 40,000 ՀՀ դրամի չափով և թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով։

6. **28.04.2023թ-ի «Սարդարապատ-09»-«ԱՐՓԻ-09» (14Ա1-050) խաղին 1) «Սարդարապատ-09» թիմի մարզիչ Արա Նիգոյանի (239) կողմից մրցավարական սենյակ մտնելը և անհամաձայնություն հայտնելը շարունակելը, 2) «Սարդարապատ-09» թիմի մեղքով խաղն անավարտ թողնելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Սարդարապատ-09» թիմի մարզիչ Արա Նիգոյանի (239) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 30-րդ կետը՝ վերջինիս զրկել իր ծառայողական պարտավորությունները կատարելու իրավունքից 1 խաղով և «Սարդարապատ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով։
2) Հաստատված համարել «Սարդարապատ-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 20-րդ կետը՝ և «Սարդարապատ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով և թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով։

7. **28.04.2023թ-ի «Ֆյունիկ Ակադեմիա»-«Արարատ-2» (ԱԽ-158) «Արարատ-2» թիմի փոխարինման ելած ֆուտբոլիստների խաղաշապիկների վրա ազգանունների բացակայությունը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 73-րդ կետը՝ «Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

8. 26.04.2023թ-ի «ԲԿՄԱ»-«Վան» (ՊԼ-144) ոստիկանության ներկայացուցիչների՝ նախախաղային խորհրդակցությանը ներկա չգտնվելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «ԲԿՄԱ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 40-րդ կետը՝ «ԲԿՄԱ»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

9. 27.04.2023թ-ի «Ուրարտու»-«Շիրակ» (ՊԼ-143) խաղի նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցիչների ներկա չգտնվելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 40-րդ կետը՝ «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»: